28. ԻՄԱՍՏԵՐ

Կէղնի չէղնի իրիկ մի, կնիկ մի ու ուրանց լե էծ մի։

Էկար բարով ու խերով։

Մարդ կելնի կէրթա ղարիպութեն։

Էդ կնիկն է, մարդ օր կէրթա ղարիպութեն, սիրողութեն կէնե։

Հ՝ըմնօր հ՝իրկուն թավեն ու թանճարեն կրակի վրեշեն չվերցվի, հավ, խաղ կը կարմրցու, կառնե ուր սիրողներն ու կը նստի։

Էդ կնկա իրիկն է, ժուկ ու ժամանակ մի կը մնա կելնի օր դառնա հ՝իդա ուր տուն։

Գիգա, ամա մեկոց մեկ կնկա երևան չելնի։

Կըսե. «Ես իմ կնկան նշանց պըտի չիտամ ընծի, պըտի էրթամ գողտուկ անկըճդրութեն էնիմ, տեսնամ իմ կնիկ ի՞նչ կէնե, ի՞նչ չէնե, նոր ընծի նշանց կիտամ ուրին»։

Կէրթա կտեսնա օր կնիկ իրեք հոգի առեր է ուր կուշտ ու բոլոր նստեր ա, սիրողութեն կէնա։

Ջուրիմ կես գիշեր ուրանց քեֆ ուրախութեն կէնին, ետև կը գրկին կնկան ու պառկին։

Օր կպառկին քնին, քուն կընցնու վըր ուրանց, կելնա հ՝երդրկեն կմտնի ներս, թե՛ կնկան, թե՛ սիրողներ լե կը սպանե, ու կառնե ուր էծ կէրթա։

Կէրթա ուրիշ էրկիր մի։

Կէրթա դուռ մի կը կայնի, կը տեսնա օր հ՝իրկվան նախրի գահ է, կնիկ մի կելնա դուրս։

Կընկան կըսե.— Քուրի՛կ, տեղ մի տուր, առնիմ իմ էծ սրթըրվորիմ, չուրի լուսուն, հ՝ելնիմ առնիմ իմ էծուն ու էրթամ։

Կնիկ կհերսոտի վրեն, կըսե.— Ընծի տեղ էղավ սրթըրվորա՝ օր իտամ քզի՞։

Կնիկ լե ջրու կէրթա։

Օր կէրթա ջրու չէ՞, կնիկ մինակ կէղնի, կառնե ուր էծն ու կէրթա մտնի թավլեն։

Կը մնա շուրի հ՝իրկուն։

Էդ կնկա իրիկն լե ջաղցրպան կէղնի, կնիկ իրկան չհավնի, կելնի ուրին սիրող կրռնե։

Հ՝իրկվան օր կնիկ կէրթա թավլի դին կովեր կթելու, էդ թավլի մեջ հոր մի կէղնի, կառնի ուր էծն ու կը մտնա էդ հորու մեջ։

Էտ մարդու տուն ու թավլեն լե մեկ կէղնի, ի՞նչ օր կէղնի տան մեջ, թավլեն կը լսին, մարդ կհ՝ելնի էդ հորու մեջ թիք կը կանի։

Ջաղցրպան է գիգա, օր բրդուճ մի հաց ուտե, էրթա ուր ջաղաց։ Կնիկ կբերե կոտիկ մի ջուրվա կը ղնե հ՝առեջ, կուտե, կելնի կէրթա։

Կնիկ լե դուռ կը փակե ու կը նստի։

Սահաթ մեկ օր կէղնի, կտեսնի օր դուռ ծեծեցին։

Դուռն օր կը ծեծեն, կնիկ կելնի կէրթա կբանա, իծու տեր հորու միջեն կը տեսնա օր քուրքով, բինիջով մարդ մի մտավ ներսառավ կնկան ու գնաց նստավ։

Կէրթա կնստի, կհանե ռաղու շուշեն, կը դնե հ՝օրթոլախ ու քեֆ ուրախութեն կէնեն։

Իծու տեր կտեսնա. օր կը տեսնա, կըսե. «Ի՞մալ էնիմ էտոնց քեֆ հարամ ղարամ էնիմ». մատ կիտա իծու պոչի տակ, էծ կը մկմկա։

Մարդ կըսե.— էդ ի՞նչ ձեն է գիգա, չէղնի մարդ կա ձեր թավլեն։

Կընիկ կըսե.— Էն կարած պատանք իծու տերն է, էկեր է, մտերա հոր, էն վախտ օր ես գացեր իմ ջրրու, բա՞ն չկա։

Կը նստին ուրանք ռաղի կը խմին, գինի կը խմին, հավ կուտին, հաց կուտին։

Կտեսնան օր դուռ զարկին։

Օր զարկին, կնիկն հ՝առջի սիրողին ասաց.

— Հ՝ելի գնա մտի հոր։

Մարդ հ՝ելավ գնաց օր մտներ հոր, իծու տեր չթորկեց, մատ տվեց իծու պոչի տակ, էծ մրկմրկաց։

Հայն ըսեց իծու տիրոջ.— Մա՞րդ, ձեն մի՞ հանի, իմ քուրք կհանիմ կիտամ քզի։

Հանեց քուրք տվեց իծու տիրոջ, իծու տեր ծալեց քուրք դրեց ուր տակ ու նստավ վրեն, նոր թողեց հայ մտավ հոր։

Կնիկ գնաց դուռ բացեց, էն մեկել սիրողն էկավ ըստ հաղուն ներս։

Փակեց դուռ ու առավ ուր սիրող էկավ նստավ, ըռաղու ջուշեն դրին օրթեն կերան, խմեցին, ուրանց քեֆ էրին։

Քեֆի մեջն էր, կնիկն աչքեց տեսավ օր դուռ մեկ լե ծեծեցին։ Օր ծեծեցին՝ կնիկն սիրողին ըսեց.

— Հ'ելի գնա մտի հոր։

Էդ հոր լե էդ սիրողներու հ'ապով են շինած։

Հայն օր գնաց կը մտներ հորու մեջ, իծու տեր ձեռք տվեց իծու պոչու տակ, էծ մըկմըկաց։

Հայն ըսեց.—Դու ու քու աստված, էտոր ձեն կտրե, մարդ մի չհասկնա մեր խաղքութեն, իմ քուրք ու հալըվներ կիտամ քզիկ։

Իծու տերն ըսեց.—Դե հանե տուր։

Հայն հանեց տվեց. իծու տեր առավ ծալեց դրեց տակ ու նըստավ վրեն, նոր թորկեց հայն, մտավ հոր։

Կնիկ գնաց բացեց դուռ, սիրողն առավ ներս էկավ նստավ։

Էնդոնք լե սազեցին կեր ու խում, քեֆ ուրախութեն կէնեն։ Իրիկ էկավ դուռ զարկեց։

Ըսեց.—Հ'ելի գնա մըտի հոր։

Օր ըսեց. «Գնա մտի հոր», իծու տեր մեկ լե ձեռք տվեց պոչի տակ, էծ մըկմըկաց։

Օր մըկմըկաց, ըսեց.— Ախբեր, հը՛շ կեցի, քու իծու ձեն մը հանի։

Իծու տերն ըսեց.—Իմ էծ դարմնելու գահն է, ընդրու հ'ապով կը մըկմըկա։

Ըսեց.—Ախբեր, իգա գահ դարմնելու վախտ չէ, դու ու քու աստված, քու իծու ձեն մը՛ հանի, իմ շորեր կը հանիմ կիտամ քզիկ։

Էն լե հանեց շորեր տվեց իծու տիրոջ, ետև թողեց իջավ հոր։

Կնիկ բացեց դուռն, առավ իրիկ ներս։

Իրիկ օր էկավ նստավ, ըսեց.

— Փշումի հաց բիբե՞ս ուտիմ։

Կնիկ գնաց կտոր մի չոր հաց, կոտիկմ՝ լե ջուրվա բերեց դրեց իրկա հ'առեջ։

Իրիկ նստուկ էր վըր հացին, իծու տեր ձեռք տվեց իծու պոչի տակ, էծ մըկմըկաց։

Իծու տերն ըսեց.—Հե՜, հե՜, իմ էծ դարմընելու վախտն է։

Իրիկ լսեց, ըսեց.—Էդի ի՞նչ ձեն է գիդա։

Կընիկ ըսեց.—Վա՜յ,— ուր մեղքեր կուղեր պահել,—վա՜յ, լացած տղեն առեր էր ուր էծ, էկեր կայնիր էր դուռ, ես կէրթենք ջրի, էկեր է, մտեր է ներս, ես չըմ տեսի։

Իծու տեր մախսուս կը մրկմրկցուցեր, օր էրիկ սիրողներու տեղ հ'իմներ։

Սիրողներ բոնին իծու տիրոջ յախեն. «Ըտոր ձեն մը՜ հանի, ինչ օր գուգիս կիտանք քզիկ. հանեցին ուրանց քիսեքներու մեջ, ինչ խըգըր փարա օր կեր, տվին իծու տիրոջ, օր իծու ձեն չհանե։

Ամա իծու տեր փշում լե մնաց, մեկ լե մրկմրկցուց ուր իծուն, ու ըսեց.

— Հե՜, հե՜, իմ իծու դարմնի վախտն է։

Իրկա չարեն կտրավ ջանդարդի էղավ, հ'ելավ էկավ հորու վրեն օր իծու ձեն կտրեր։

Օր գիդեր, ինքն ուրին ճամբու հետ կըսեր ու գիդար. «Քոփակ, իդա դահ ի՞նչ դարմնի վախտ է օր քու իծու ձեն կը հանիս»։

Իծու տերն ըսեց.—Քոփակ դու իս, ընծիկ հ'ո՞րի կըսիս քոփակ, մադամ օր իմ իծու դարմնի վախտ չէ, ըպա քու կնկա ըուղեներու վախտն է՞, արի տես հ'ուդա ի՞նչ կա։

Կնկա իրիկն հ'ելավ, էկավ, տեսավ օր իրեք մարդ տուքուռուք նստուկ ին մըջ հորուն։

Իծու տեր, նոր գլխուց մեկ մեկ պատմեց ուր տեսածներ։

Էրկուս էղան մեկ, զարկին իրեք մարդն ու կնիկ սպանին։

Իծու տեր էդ մարդըկտոց հալըվներ ու փարեք առավ ուրին, դնաց քաղքի մեջ խասպի մի դուռ կայնավ, մարդ լե թարկի տյունյա էղավ հ'ընկավ էրկըրներ։

Իծու տեր օր էկավ խասպի դուռ կանավ, խասպին ըսեց.

— Ընծիկ կուշտ քեպապ տուր ուտիմ, էդա էծ տամ քըզիկ։

Խասապ բերեց կես շախա միս էրից քեպապ, տվեց իծու տիրոջ, կերավ։

Իծու տեր ըսեց.—Նոր համ տեսա, գնա էլի բի։

Խասապն ըսեց.—Դու կես ջանդակ կերար, չկշտացար, կես ջանդակ լե տամ քզիկ ուտիս, իմ ճար ի՞նչ կէղնի, հ'ելի, առ քու էծ լե քզիկ, քեպապ լե քզիկ ու գնա։

Հ'ելավ առավ ուր էծն ու գնաց։

Գնաց քիչ մի օլորդավ, առավ ուր էծ, գնաց կանավ չորպաճու մի դուռ։

Ըսեց.—Զորպաճի՛, քիչ մի չորպա տուր ընծիկ ուտիմ, իմ էծ իտամ քզիկ։

Զորպաճին բերեց չորպա լըցեց կերավ, լըցեց կերավ։

Իծու տեր ըսեց.—Էլի բիր, ըդոր համ նոր տեսա։

Զորպաճին ըսեց.—Հ'ելի առ քու էծ ու դաֆ էղի. էծ լե քզիկ Թըղ էղնի, չորպեն լե քզիկ։

Հ'ելավ, առավ ուր էծն ու հ'ընկավ քաղքի մեջ, օլորդավ էկավ բըրյանճու դուռ կայնավ։

Ըսեց.—Բըրյանճի, տո՛ւր ընծիկ կուշտ բըրյան ուտիմ, իմ էծ իտամ քզիկ։

Բըրյանճին բերեց ջանդակ մի դրեց իծու տիրոջ հ'առեջ, կերավ.

Ըսեց.—Համ չառավ բերանս։ Բի՛ քիչ մ'լե ուտիմ։

Բըրյանճին ըսեց.—Հ'ելի առ քու էծ ու գնա, քու էծ լե քզիկ, բըրյան լե քզիկ։

Հ'ելավ առավ ուր մոտու ջորերն ու փարեք, իծու հետ դառձավ էկավ տուն։

Դրեց տուն ու տեղ, կարգվավ։

Էնի հասավ ուր մուրազին։ Դուք լե հասնիք ձեր մուրազին։